

2989

# Ի. ԱՏԱԼԻՆ

ԲՈԼԵՎԵՎԻԶՄԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ  
ՄԻՔԱՆԻ  
ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

31K33  
P-81

ԴԱԼԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՑԵՐԵՎԱՆ • 1940

ԳՐՈՂԵՏԱՐՆԵՐ ԲՈՂՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅՆ


3K33  
F-81 *ՄՊ*

10 JUN 2005

14 NOV 2005

## Ի. ԱՏԱԼԻՆ

ԲՈԼԵՎԵՎԻԶՄԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԻՔԱՆԻ  
ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ



ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ • 1940

2989

ԲՈԼՇԵՎԻԿՄԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԻՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

ՆԱՄԱԿ «ПРОЛЕТАРСКАЯ РЕВОЛЮЦИЯ» ԺՈՒՐՆԱԼԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ

## Հարդելի՛ ընկերներ

Վճռականութեն բողոքում եմ Սլուցկու «Բոլշևիկները գերմանական սոցիալ-դեմոկրատիայի մասին նրա նախապատճեացման կրիպիսի շրջանում» Հակակուսակցական ու կիսատրոցկիստական հոդվածը «Пролетарская Революция» ժուռնալում (1930 թ. № 6) վերպես վիճուսիոն հոդված ուետուսում ուեմ.

Սլուցկին պնդում է, թե Լենինը (բոլշևիկները) թերազնաձատում էր գերմանական ու ընդհանրապես նախապատերազմյան սոցիալ-դեմոկրատիայի մեջ յեղած ցենտրիզմի վտանգը, այսինքն՝ թերազնահատում էր քողարկված ոպղոտունիզմի վտանգը, ոպղոտունիզմի հանդեպ հաշտվողականություն ցուցաբերելու վտանգը: Այլ կերպ ասած՝ ըստ Սլուցկու դուրս ե գալիս, վոր Լենինը (բոլշևիկները) անհաշտ պայքար չեր մղում ոպղոտունիզմի դեմ, վորովհետև ցենտրիզմի թերազնահատումն ըստ բանի եյության հրաժարումն ե ոպղոտունիզմի դեմ ծավալուն պայքար մղելուց: Այսպիսով, դուրս ե գալիս, վոր Լենինը պատերազմին նախորդող ժամանակաշրջանում դեռևս իսկական բոլշևիկ չեր վոր իմպերիալիստական պատերազմի ժամանակաշրջանում միայն, կամ նույնիսկ այդ պատերազմի վերջերքին Լենինն իսկական բոլշևիկ դարձավ: Այսպես ե պատմում իր հոգլածում Սլուցկին: Իսկ դուք, փոխանակ նշավակելու այս նորահայտ «պատմաբան» վորպես զրպարտչի ու կեղծարարի, դիսկուսիայի յեր բոլոր վում նրա հետ, նրան տրիբունա յեք տալիս: Զեմ կարող չըռջուքել Սլուցկու հոգվածը վորպես դիսկուսիոն հոգված ձեր ժողովականությունը դետեղելու դեմ, վորովհետև չի կարելի դիսկուսիայի առարկա դարձնել Լենինի բոլշևիկության հարցը, այն հարցը, թե Լենինն արդյոք սկզբունքային անհաշտ պայքար մղում եր ցենտրիզմի՝ վորպես ոպղոտունիզմի վորոշ տեսակի՝ դեմ, թե պայքար չեր մղում, Լենինն իսկական բոլշևիկ եր; թե այդպիսին չեր:

«Խմբագրության կողմից» արած ձեր հայտարարության մեջ՝



845  
41

И. СТАЛИН

## О НЕКОТОРЫХ ВОПРОСАХ ИСТОРИИ БОЛЬШЕВИЗМА

Государственное издательство политической литературы

վոր կենտրոն և ուղարկվել հոկտեմբերի 20-ին, դուք ընդունում  
եք, վոր խմբագրությունը սխալ է թույլ տվել՝ զետեղելով  
Սլուցկու հողմածը վորակու դիսկուսիոն հոդված։ Այդ, իշարկե,  
լավ է, չայած վոր խմբագրությանդ հայտարարությունը լույս  
է տեսնում մեծ ուշացումով։ Բայց դուք ձեր հայտարարության  
մեջ թույլ եք տալիս նոր սխալ, հայտարարելով, թե «խմբա-  
գրությունը քաղաքականապես վերին աստիճանի ակտուալ ու-  
անհրաժեշտ է համարում պրոբլեմների այն ամբողջ խմբի հետա-  
գա մշակումը «Пролетарская Революция»-ի հջերում, վորոնք  
նաև փոխհարաբերության հետ»։ Այդ նշանակում է, վոր դուք  
նաև փոխհարաբերության մեջ ներքաշելու այն  
մտադիր եք մարդկանց նորից դիսկուսիայի մեջ ներքաշելու այն  
հարցերի վերաբերմամբ, վորոնք բոլշևիզմի աքսիոմաներն են։ Այդ  
նշանակում է, վոր Լենինի բոլշևիկության հարցը դուք նորից  
ուղղում եք աքսիոմայից վերածել «հետագա մշակման» կարուտ մի  
պրոբլեմի։ Ինչո՞ւ, ի՞նչ հիման վրա։ Բոլորին հայտնի յե, վոր  
ընդունիքը ծննդել, աճել ու ամրացել ե անողոք պայքարում ամեն  
յերանդի ոպորտունիքմի դեմ, այդ թվում ցենտրիզմի դեմ՝  
յերանդի ոպորտունիքմի դեմ՝ մեզանում (Տրոցկի Արևմուտքում (կառուցի), ցենտրիզմի դեմ՝ մեզանում)։ Այս չեն կարող ժիստել բոլշևիզմի մինչեւ անդամ  
և ուրիշները)։ Այս չեն կարող ժիստել բոլշևիզմի մինչեւ անդամ  
ուղղակի թշնամիները։ Այս աքսիոմա յե, իսկ դուք մեզ քաշում  
դեպի հետ, փորձելով աքսիոման դարձնել «հետագա մշակ-  
ման» յենթակա պրոբլեմ։ Ինչո՞ւ։ Ի՞նչ հիման վրա։ Գուցե  
չելիզմի պատմությանն անծանօթ լինելու պատճառով։ Գուցե  
ի սեր փառած լիբերալիզմի, վորպեսի Սլուցկիները և Տրոցկու  
այլ աշակերտները չկարողանան ասել, թե իրենց բերանը փակում  
են։ Բավական տարորինակ լիբերալիզմ, վոր կիրառվում է ի  
հաշիվ բոլշևիզմի կենսական շահերի...

Խմբագրությունը Սլուցկու հողմածում իսկապես ի՞նչն է  
գիտուսիոն քննարկման արժանի համարում։

1) Սլուցկին պնդում է, թե Լենինը (բոլշևիկները) գիծ չեր  
պարում դեպի խզում, դեպի պառակտում գերմանական սոցիալ-  
դեմոկրատիայի ոպորտունիստների հետ, մինչպատերազմյան  
ժամանակաշրջանի Անտերնացիոնալի ոպորտունիստների հետ։  
Դուք ուղղում եք դիսկուսիա մեջել Սլուցկու այս արոցիստա-  
թուակ թեղիսի դեմ։ Բայց այստեղ ի՞նչ դիսկուսիոն բան կա։ Մի՞-  
շան թեղիսի դեմ։ Բայց այստեղ ի՞նչ դիսկուսիոն բան կա։ Մի՞-  
շան թեղիսի դեմ։ Վոր Սլուցկին ուղղակի գրպարտում է Լենինին,  
թե պարզ չե, վոր Սլուցկին ուղղակի գրպարտում է նշանակել, և վոչ  
բոլշևիկներին։ Զրաբարտությունը հարկավոր է նշանակել, և վոչ  
դիսկուսիայի առարկա դարձնել։

Ամեն մի բոլշևիկ, յեթե նա խոկապես բոլշևիկ է, գիտե՛, վոր  
գեռնս պատերազմից շատ առաջ, մոտավորապես 1903—1904  
թվականներից, յերբ Ռուսաստանում ձևավորվեց բոլշևիկների  
խումբը, և յերբ գերմանական սոցիալ-դեմոկրատիայի ձախերն  
առաջին անգամ իրենց գոյությունն զգալ տվին, — լենինը գիծ եր  
վարում դեպի խզում, դեպի պառակտում ուղղուունիստների  
հետ թե՛ մեզանում, Ռուսաստանյան սոցիալ-դեմոկրատական  
կուսակցության մեջ, թե՛ այստեղ, II ինտերնացիոնալում, մաս-  
նավորապես գերմանական սոցիալ-դեմոկրատիայի մեջ։ Ամեն մի  
բոլշևիկ գիտե, վոր հենց այս պատճառով բոլշևիկներն արդեն  
այն ժամանակ (1903—1905 թ. թ.) II ինտերնացիոնալի ոպոր-  
տունիստների շաբերում «պառակտիչների» ու «կազմալուծիչնե-  
րի» պատվավոր հոչակ վաստակեցին։ Բայց ի՞նչ կարող եր անել  
լենինը, ի՞նչ կարող եյին անել բոլշևիկները, յեթե ձախ սոցիալ-  
դեմոկրատները II ինտերնացիոնալում ե, ամենից առաջ, գերմա-  
նական սոցիալ-դեմոկրատիայի մեջ, թույլ ու անզոր մի խումբ  
եյին, կազմակերպուեն չձեւավորված, իդեոլոգիապես չկոփված  
մի խումբ, վորը «խոռում», «պառակտում» բառը նույնիսկ վա-  
խենում եր արտասանել։ Հո չի՞ կարելի պահանջել, վորպեսզի  
լենինը, վորպեսզի բոլշևիկները Ռուսաստանից ձախերի փոխա-  
րեն պառակտում սարքեյին արևմտյան կուսակցություններում։  
Ել յես չեմ խոսում այն մասին, վոր կազմակերպական ու իդեո-  
լոգիական թուլությունը ձախ սոց-դեմ։ Բնորոշ գիծն եր վոչ  
միայն մինչպատերազմյան ժամանակաշրջանում։ Դա, այդ բա-  
ցասական գիծը, ինչպես հայտնի յե, ձախերը պահպանեցին նաև  
հետպատերազմյան ժամանակաշրջանում։ Բոլորին հայտնի յե  
գերմանական ձախ սոց-դեմ։ մասին արված գնահատականը լե-  
նինի «Յունիուսի բրոցյուրի մասին»<sup>1</sup> հայտնի հողվածում, վորը  
գրված է 1916 թվի հոկտեմբերին, այսինքն՝ պատերազմի սկզբից  
ավելի քան յերկու տարի անց, վորտեղ լենինը, քննադատելով  
գերմանիայի ձախ սոց-դեմ։ մի ամբողջ շարք լրջագույն քաղա-  
քական սխալները, խոսում է «քուլոր գերմանական ձախերի  
թուլության մասին, վորնեց բոլոր կողմերից պատել և կառց-  
կական կեղծավորության, պեղանատության, ոպորտունիստների  
նկատմամբ «ունեցած սիրալիրության» նողկալի ցանցը», վոր-  
տեղ նա խոսում է այն մասին, վոր «Յունիուսը լիովին չի ազա-

<sup>1</sup> Յունիուսը նողա լուսեմբուրգն է, ձախ սոց-դեմ։ լիեբը գերմանա-  
կան սոցիալ-դեմոկրատիայի մեջ։

տագրվել գերմանական, մինչև անգամ ձախ սոցիալ-դեմոկրատ-ների, «միջավայրից», վորոնիք վախենում են պառակտումից, վախենում են հեղափոխական լոզունգները լրիվ մինչև վերջն ասելուց»:

II Խնտերնացիոնալի բոլոր խմբավորումներից ոռւսական բոլշևիկներն այն ժամանակ միակ խմբավորումն ենին, վորոն իր կազմակերպական փորձով ու խոելորդիական կովովածությամբ ընդունակ եր ձեռնարկելու վորուել լուրջ բան՝ ուղղակի խղման, պառակտման իմաստով՝ իրենց ոպորտունիստների հետ իրենց ոռւսաստանյան սոցիալ-դեմոկրատիայի մեջ: Այ, յեթե Սլուցկիները փորձ անելին մինչև անգամ վո՞չ թե ասպարուցելու, այլ պարզապես յենթադրելու, թե լենինն ու ոռւսական բոլշևիկները չեն ոպտազործել իրենց ամբողջ զգորությունը, վորակնողի կազմակերպեն պառակտումն ոպորտունիստների հետ (Պլիսանով, Մարտով, Դան) ու վոնդեն յենտրիստներին (Տրոցկի ու Ռուսոսյան բրոկի այլ կողմնակիցներ), ապա այն ժամանակ կարելի կլիներ վիճել լենինի բոլշևիկության մասին, բոլշևիկների բոլշևիզմի մասին: Բայց բանն ել հենց այն ե, վոր Սլուցկիները չեն համարձակվում մինչև անգամ ծպտուն հանել հոգուտ այդպիսի վայրենի յենթադրության: Զեն համարձակվում, վորովհետեւ դիտեն, վոր ոռւսական բոլշևիկների կողմից ամեն յերանդի ոպորտունիստների հետ կազերը խղելու համար կիրառված (1904—1912 թ. թ.) վճռական քաղաքականության ամենքին հայոնի փաստերն աղաղակում են այդպիսի յենթադրության դեմ: Զեն համարձակվում, վորովհետեւ դիտեն, վոր իրենք մյուս որն ևեթ անարդարքի սյունին կրամվեն:

Բայց ահա մի հարց, ոռւսական բոլշևիկները կարո՞ղ ենին արդյոք իրականացնել պառակտումն իրենց ոպորտունիստների ու յենտրիստ-հաշտվողականների հետ իմպերիալիստական պատերազմից շատ առաջ (1904—1912 թ. թ.)՝ դրա հետ մեկտեղ դիօ չմարելով դեմի խղումը, դիօ դեմի պառակտումը II Խնտերնացիոնացիոնալի ու յենտրիստների ու յենտրիստների հետ: Ո՞վ կարող են կասկածել այն մասին, վոր ոռւսական բոլշևիկներն ոպորտունիստների ու յենտրիստների նկատմամբ վարած իրենց քաղաքականությունը համարում ենին քաղաքականության տիպար Արևմուտքի ձախերի համար: Ո՞վ կարող են կասկածել այն մասին, վոր ոռւսական բոլշևիկներն Արևմուտքի ձախ սոց-դեմոկրատ-ներին, մասնաւորապես գերմանական սոցիալ-դեմոկրատիայի

Յախերին ամեն կերպ մղում եյին դեպի խղում, դեպի պառակտում իրենց ոպորտունիստների ու յենտրիստների հետ: Լենինի ու ոռւսական բոլշևիկների մեղքը չե, յեթե Արևմուտքի ձախ սոց-դեմ. հաստնացած գուրս չեկան այն բանի համար, վորպեսի ոռւսական բոլշևիկների հետքերով ընթանան:

2) Սլուցկին կշտամբում ե լենինին ու բոլշևիկներին, վոր նրանք գերմանական սոց-դեմ. մեջ յեղած ձախերին չեյին աջակցում վճռաբար ու անդառնալի կերպով, վոր նրանք վերջիններին պաշտպանում եյին լուրջ վերապահումներով միայն, վոր Փրակցիոն նկատառումները նրանց խանդարում եյին մինչև վերջն աջակցելու ձախերին: Դուք ուղում եք դիսկուսիա մղել այս շատանական ու տեղովը կեղծ կշտամբանքի դեմ: Բայց այստեղ խկապես ի՞նչ դիսկուսիոն բան կա: Մի՞թե պարզ չե, վոր Սլուցկին այստեղ մաներում ե և լենինի ու բոլշևիկների գեմ ուղղված կեղծ կշտամբանքով աշխատում ե քողարկել Գերմանիայի ձախերի դերքի խսկական բացերը: Մի՞թե պարզ չե, վոր բոլշևիկները չեյին կարող աջակցել ձախերին Գերմանիայում, վորոնք հենց մի գլուխ տատանվում եյին բոլշևիզմի ու մենշևիզմի միջև, առանց լուրջ վերապահումների, առանց նրանց սխալների լուրջ քննադատության, չդաշտանանելով բանվոր դասակարգին ու նրա հեղափոխությունը: Խարերայական մանյուլները հարկավոր ե նշալակել, և վոչ թե դիսկուսիայի առարկա դարձնել:

Այս՝ բոլշևիկներն աջակցում եյին ձախ սոց-դեմ. Գերմանիայում միայն վորով լուրջ վերապահումներով՝ քննադատելով նրանց կիսամենչեկիլյան սխալները: Բայց սրա համար հարկավոր ե նրանց վողունել, և վոչ թե կշտամբել:

Կա՞ն մարդիկ, վորոնք կասկածում են սրանում:

Դիմենք պատմության ամենից ալելի հայտնի վաստերին:

ա) 1903 թվին լուրջ տարածայնություններ դրսւորվեցին Թուռաստանի բոլշևիկների ու մենշևիկների միջև կուսակցության անդամության հարցի առթիվ: Կուսակցության անդամության մասին իրենց ձեւակերպումով բոլշևիկներն ուղում եյին կազմակերպական սանձ ստեղծել վոչ-պրոլետարական ելեմենտների՝ կուսակցության ներս հորդելու դեմ: Այդպիսի հորդման վտանգն այն ժամանակ ավելի քան ուսալ եր՝ ոռւսական հեղափոխության դուրժուա-դեմոկրատական բնույթի չնորհիվ: Ռուսական մենշեմիկները հակառակ դիրք եյին պաշտպանում, վորը կուսակցու-

թյան դրսերը լայնորեն բաց եր անում վոչ-պրոլետարական ելեմենտների առջև։ Քանի վոր ոռւսական հեղափոխության հարցերը կարևոր նշանակություն ունելին համաշխարհային հեղափոխական շարժման համար, արևմտայելրոպական սոցիալ-դեմոկրատները վճռեցին միջամտել գործին։ Միջամտեցին նաև Գերմանիայի ձախ սոցիալ-դեմոկրատները՝ Պարլումեն ու Ռոզա Լուքսեմբուրգը, ձախերի այն ժամանակավա լիդերները։ Յեվ ի՞նչ։ Նրանք յերկուսն ել բոլցեկիների դեմ արտահայտվեցին։ Ընդամենք բոլցեկիների հասցեյին մեղադրանք չպրավեց ուղարցենարալիզմի ու բլանկիստական տենդենցիներ ունենալու վերաբերմար։ Հետազայում մենչեկիները վորդեղբեցին այդ գոեհիկ ու քաղենիկական եպիտետներն ու տարածեցին ամբողջ աշխարհով մեկ։

բ) 1905 թվին բոլցեկիների ու մենչեկիների միջև Ռուսաստանում տարածայնություններ ծավալվեցին ոռւսական հեղափոխության բնույթի շուրջը։ Բոլցեկիները պաշտպանում եյին բանվոր դասակարգի դաշնիքի իդեան գյուղացիության հետ՝ պրոլետարիատի հեղեմոնիայի պայմանով։ Բոլցեկիները պնդում եյին, վոր գործը հարկավոր ե տանել դեպի պրոլետարիատի ու գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրան այն հաշվով, վորպեսզի բուրժուատ-դեմոկրատական հեղափոխությունից անհապաղ անցում կատարվի դեպի սոցիալիստական հեղափոխությունը՝ ապահովելով աջակցությունը գյուղի չքաղորության կողմից։ Մենչեկիները Ռուսաստանում մերժում եյին բուրժուատ-դեմոկրատական հեղափոխության մեջ պրոլետարիատի հեղեմոնիայի իդեան, լիբերալ բուրժուազիայի հետ համաձայնությունն ունենալու քաղաքականությունը նրանք գերադասեցին բանվոր դասակարգի՝ գյուղացիության հետ դաշնիք ունենալու քաղաքականությունից, իսկ պրոլետարիատի ու գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրան հայտարարեցին ուեակցիոն բլանկիստական սխեմա, վորը հակասում ե բուրժուական հեղափոխության զարգացմանը։ Ի՞նչպես վերաբերյացին այս վեճերին գերմանական սոցիալ-դեմոկրատիայի ձախերը՝ Պարլումեն ու Ռոզա Լուքսեմբուրգը։ Նրանք հնարեցին պերմանենտ հեղափոխության ուստոպիական ու կիսամենչեկիյան սխեման (հեղափոխության մարքային սխեմայի այլառական ժամանակակից պատկանը), վորն ամբողջովին տողորված եր բանվոր դասակարգի ու գյուղացիության դաշնիքի քաղաքականության մենչեկիյան ժխտումով, և այն հակադրեցին պրոլետարիատի ու գյուղացիության դաշնիքի պատկանական շարժման մեջ։

թյան հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի բոլցեկիյան սխեմային։ Հետազայում Տրոցկին (մասամբ ել Մարտովը) վորդեգրեց պերմանենտ հեղափոխության այս կիսամենչեկիյան սխեման ու լինինիզմի դեմ պայքարելու գործիք դարձրեց։

դ) Պատերազմին նախորդող ժամանակաշրջանում Անտերնացիոնալի կուսակցություններում հրապարակ յեկավ, վորպես ամենասակառաւալ հարցերից մեկը, ազգային-դադութային հարցը, ճնշված ազգերի ու գաղութների ազատագրման հարցը, իմպերիալիզմի դեմ պայքարելու ուղիների հարցը, իմպերիալիզմի տապալման ուղիների հարցը։ Պրոլետարիական հեղափոխությունը ծավալելու և իմպերիալիզմը շրջապատելու շահերի տեսակետից՝ բոլցեկիներն առաջարկեցին ճնշված ազգերի ու գաղութների ազատագրական շարժման ազանական ազգերի ինքնորոշման բազայի վրա աջակցելու քաղաքականությունն ու գարգացրին առաջակիոր յերկրների պրոլետարիան հեղափոխության և գաղութների ու ճնշված յերկրների ժողովուրդների հեղափոխական-ազատագրական շարժման միջև միասնական Փրոնտ ստեղծելու սխեման։ Բոլոր յերկրների ոպորտունիստները, բոլոր յերկրների սոցիալ-շովինիստներն ու սոցիալ-իմպերիալիստները չհավաքցությամբ զինվելու բոլցեկիների դեմ։ Բոլցեկիներին հարածում եյին ինչպես կատաղած չների։ Այդ ժամանակ ի՞նչ դիրք բռնեցին ձախ սոցգեմ։ Արևմուտքում։ Նրանք զարգացրին իմպերիալիզմի կիսամենչեկիյան թեորիան, մերժեցին ազգերի ինքնորոշման սկզբունքը նրա մարքսիստական ըմբռնմամբ (ընդհուպ մինչև անջատումն ու ինքնուրույն պետություններ կազմելը), բացարկեցին (օտել) գաղութների ու ճնշված յերկրների ազատագրական շարժման լուրջ հեղափոխական նշանակության վերաբերյալ թեղիսը, բացարկեցին պրոլետարիական հեղափոխության ու ազգային-ազատագրական շարժման միջև միասնական Փրոնտ ունենալու հնարավության վերաբերյալ թեղիսը և այդ ամբողջ կիսամենչեկիյան շփոթը, վոր ազգային-պաղութային հարցի կատարյալ թերագնահատությունն ե, հակադրեցին բոլցեկիների մարքսիստական սխեմային։ Հայտնի յե, վոր հետո Տրոցկին վորդեգրեց այդ կիսամենչեկիյան շփոթը և այն ողտագործեց վորպես պայքարի գործիք լինինիզմի դեմ։

Սրանք են ձախ սոց-դեմ։ Բոլորին հայտնի սխալները Գերմանիայում։

ԵԼ չեմ խոսում գերմանական ձախերի մյուս սխալների մասին, վոր խստորեն քննադատովել են Լենինի համապատասխան հոգվածներում:

Չեմ խոսում նույնպես այն սխալների մասին, վոր նրանք թույլ են տվել բոլցեկիների՝ զոկտեմբերյան հեղափոխության ժամանակաշրջանի քաղաքականությունը դնահատելիս:

Ինչի՞ մասին են խոսում գերմանական ձախերի այս սխալները, վորոնք առնված են մինչպատերազմյան ժամանակաշրջանի պատմությունից, յեթե վոչ այն մասին, վոր ձախ սոց-դեմ, չնայած իրենց ձախությանը, դեռ չեն ազատագրվել մենշևիկյան քաղաքից:

Իհարկե, ձախերը Գերմանիայում ունեյին վոչ միայն լուրջ սխալներ: Նրանք իրենց անցյալում ունեն հեղափոխական խոչըր ու լուրջ գործեր են: Յես նկատի ունեմ նրանց մատուցած մի ամբողջ շարք ծառայություններն ու նրանց մի ամբողջ շարք հեղափոխական յելույթները ներքին քաղաքականության և, մտանալորապես, ընտրական պայքարի հարցերի առթիվ, պատրամենատական ու արտապալամենտական պայքարի, ընդհանուր գործադրութիւն, պատերազմի, Ռուսաստանի 1905 թ. հեղափոխության և այլ հարցերի առթիվ: Բոլցեկիներն ել հենց այս պատճառով եյին նրանց հետ վորպես ձախերի հետ հաշվի նստում ու աջակցում եյին նրանց, առաջ եյին մղում նրանց: Բայց այս չի վոչնչացնում ու չի կարող վոչնչացնել այն փաստը, վոր ձախ սոց-դեմ. Գերմանիայում դրա հետ մեկտեղ ունեցել են մի ամբողջ շարք ամենալուրջ քաղաքական ու թիորիական սխալներ, վոր նրանք դեռ չեն ազատվել մենշևիկյան բնուից ու այդ պատճառով կարիք ունեյին բոլցեկիների կողմից ամենալուրջ քննադատության:

Այժմ ինքներդ դատեցեք, արդյոք Լենինն ու բոլցեկիները կարո՞ղ եյին աջակցել Արևմուտքի ձախ սոց-դեմ. առանց լուրջ վերապահումների, առանց նրանց սխալների լուրջ քննադատության՝ չղալվածանելով բանվոր դասակարգի շահերին, չղալվածանելով հեղափոխության շահերին, չղալվածանելով կոմունիդ-մին:

Պարզ չե՞ արդյոք, վոր Սլուցկին, կշամբելով լենինին ու բոլցեկիներին այն բանի համար, վորի առթիվ նա պետք է վոր վողջուներ նրանց, յեթե ինքը բոլցեկի լիներ, —մերկացնում ե իրեն մինչև վերջը՝ վորպես կիսամենշևիկի, վորպես դիմակա-վորված արոցկիստի:

Սլուցկին յենթաղբություն և անում, թե Լենինն ու բոլցեկիներն Արևմուտքի ձախերի մասին իրենց աված գնահատականում յելում եյին իրենց Փրակցիոն նկատառումներից, թե, ասել ե, ոռուսական բոլցեկիները միջազգային հեղափոխության մեծ գործը զոհաբերում եյին իրենց Փրակցիայի շահերին: Հազիվ թե հարկ կա ապացուցելու, վոր այդպիսի յենթաղբությունից ալիկի գոնձիկ ու նողկալի վոչինչ չի կարող լինել: Ավելի գոնձիկ վա-չինչ չի կարող լինել, վորովհետև մինչև անդամ մենշևիկիների ժիկն պատկանող մերկապարանոց գուեհկարաններն սկսում են հասկանալ, վոր ոռուսական հեղափոխությունը ոռուսների մասնավոր գործը չե, վոր նա, ընդհականակը, ամբողջ աշխարհի բան-վոր դասակարգի գործն և, համաշխարհային պրոլետարական հեղափոխության գործը: Ավելի նողկալի վոչինչ չի կարող լի-նել, վորովհետև մինչև անդամ II ինտերնացիոնալին պատկանող պրոֆեսիոնալ զրաբարտիչներն սկսում են հասկանալ, վոր բոլցեկիների հետեւլական ու մինչև վերջը հեղափոխական ինտեր-նացիոնալիզմը պրոլետարական ինտերնացիոնալիզմի տիսպար ե բոլոր յերկրների բանվորների համար:

Այո՛, ոռուսական բոլցեկիներն առաջին ովանն եյին քաշում ոռուսական հեղափոխության արմատական հարցերը, ինչպիսիներն են՝ կուսակցության, դեպի բուրժուատ-դեմոկրատական հեղափո-խությունը մարքսիստների ունենալիք վերաբերմունքի, բանվոր դասակարգի ու գյուղացիության դաշինքի, պրոլետարիատի հե-գեմոնիայի, պատրամենտական ու արտապալամենտական պայ-քարի, ընդհանուր գործադուլի, բուրժուատ-դեմոկրատական հե-ղափոխության՝ սոցիալիստականի վերածելու, պրոլետարիատի դեկտատուրայի, իմպերիալիզմի, ազգերի ինքնորոշման, ճնշված պագերի ու զաղութների աղատագրական շարժման, այդ շարժ-մանն աջակցելու քաղաքականության հարցերը և այլն: Երանք առաջ եյին քաշում այս հարցերը վորպես փորձաքար, վորի վրա մտուցում եյին ձախ սոցիալ-դեմոկրատների հեղափոխական տո-կունությունն Արևմուտքում: Արդյոք նրանք այդ բանն անելու իրավունք ունեյին: Այո՛, ունեյին: Վո՛չ միայն ունեյին, այլ պարտավոր եյին այդ ձեռվ վարվել: Երանք պարտավոր եյին այդ ձեռվ վարվել, վորովհետև այդ բոլոր հարցերը միաժամանակ համաշխարհային հեղափոխության արմատական հարցերն եյին, վորի խնդիրներին բոլցեկիները յենթաղբությունը, իրենց տակտիկան: Երանք պարտավոր

ելին այդ ձեռվ վարպետ, վորովհետեւ միայն այդպիսի հարցերով  
կարելի յեր ինչպես հարկն ե սուսագել Ա ինտերնացիոնալի այս  
կամ այն խմբավորման հեղափոխականությունը։ Հարց ե ծա-  
գում այն խմբավորման հեղափոխականությունը։ Հարց ե ծա-  
գում։ Ել վո՞րն ե այստեղ ոռւսական բոլեսիկների «Փրակցիոնա-  
կանություն» և ի՞նչ դործ ունեն այստեղ «Փրակցիոն» նկատա-  
ռումները։

Լենինը գեռևս 1902 թվին իր՝ «Ի՞նչ անել» բրոշյուրում գրուեր, վոր «պատմությունը մեր առաջ այժմ դրել է մի մերձավորագույն խնդիր, վոր ամեն մի այլ յերկրի պրոլետարիատի բոլոր մեր ձարձրական խնդիրը, ամեն մի այլ յերկրի պրոլետարիատի բոլոր դաշտում է պատճենագույն խնդիրը, ամեն մի այլ յերկրի պրոլետարիատի բոլոր միայն յեվրոպական, այլ նաև ասիական ու եվրոպական ամենահզոր պատվարի խորտակումը, —ուստանան պրոլետարիատին կրաքանչ միջազգային հեղափոխական պրոլետարիատի ավանդարդը»։ Հիմք անել» բրոշյուրի լույս տեսնելու ժամանակից անցել է 30 տարի։ Վոչ վոք չեւամարձակվի ժխտել, վոր գեպերն այդ ժամանակաշրջանում վայլուն կերպով հաստատեցին Լենինի խոսքերը։ Բայց արդյոք սրանից չի՞ հետևում, վոր ոռւսական հեղափոխությունը յեղել է (և մնում է) համաշխարհային հեղափոխության հանդուցակետը, վոր ոռւսական հեղափոխության վրամատական հարցերը միաժամանակ հանդիսանում ելին (և այժմ առաջական հարցերը միաժամանակ հանդիսանում են) համաշխարհային հեղափոխության արմատական հարցերը։

Պարզ չե՞մ արդյոք, վոր միմիայն այսպիսի արմատական հարցերով կարելի յեր իսկապես ստուգել ձախ ու ողջ հեղափոխականությունն Արևմուտքում:

Պարզ չէ՝ արդյոք, վոր այն մարդիկ, վորոնք այս հարցում  
քննության են առնում վորպես «Փրակցիոն» հարցեր, — մերկաց-  
նում են իրենց մինչև վերջը վորպես գուեհկարաններ ու վերա-  
սերվածներ :

3) Սլուցկին պնդում ե, թե գեռ չեն գտնվել բավարար քա-  
նակով պաշտոնական վայերադրեր, վորոնք վկայելիս լինելին  
լենինի (բոլշևիկների) վճռական ու անհաջող պայքարի մասին  
ցենտրիզմի դեմ։ Նա այս բյուրոկրատական թեղիսը գործ ե  
ածում վորպես անժիստելի փաստարկ Հոգուտ այն դրոյթի, թե  
լենինը (բոլշևիկները), հետեւաբար, թերագնահատում եր Ա ին-  
տերնացիոնալում յեղած ցենտրիզմի վտանգը։ Դուք հանձն եք  
առնում դիսկուսիա մղել այս ցնդարանության դեմ, այս ժուլի-

կարկան պատրիլակագործության (կրյոշություն) գեմ։ Բայց իսկ կապես ի՞նչ դիսկուսիոն բան կա այստեղ։ Մի՞թե այնպես ել պարզ չեն, վոր Սլուցիին վավերապերի վերաբերյալ զրույցներով ջանում և քողարկել իր այսպես կոչված՝ դիրքավորման փողորմելիությունն ու կեղծիքը։

Սլուցկին գոյությունն ունեցող կուսակցական վավերագրերը  
բավական չեն համարում։ Ինչո՞ւ, ի՞նչ հիման վրա։ Մի՞թե Ա  
Ինտերնացիոնալի գծով, ինչպես նաև ոռւսաստանյան սոցիալ-  
գենոկրատիայի ներկուսակցական պայքարի գծով յեղած բոլորին  
հայտնի վավերագրերը բավական չեն, վորպեսզի ամենայն պար-  
զությամբ ցուցադրի Լենինի ու բոլշևիկների հեղափոխական  
անհաջողությունն ոպորտունիստների ու ցենտրիստների դեմ  
մղած նրանց պայքարում։ Սլուցկին ընդհանրապես ծանոթ է  
արդյոք այդ վավերագրերին։ Ել ի՞նչ փաստաթղթեր են հար-  
կավոր նրան։

Յենթաղը ենք, թե գտնվեն, բացի արդեն հայտնի վավերագրերից՝ մի կույտ այլ վավերագրեր, ասենք, բոլշևիկների բանաձևեր, վորոնեք մի ավելորդ անդամ խոսում են ցենտրիզմի վոչընչացման անհարժեշտության մասին։ Արդյո՞ք այս նշանակում է, վոր միմիայն թղթե վավերագրերի առկայությունը բավական է, վորպեսզի ցուցադրենք բոլշևիկների խական հեղափոխականությունն ու խականն անհաջողությունը ցենտրիզմի նկատմամբ։ Ել ո՞վ, բացի անհուսալի բյուրոկրատներից, կարող ե վստահել միմիայն թղթե վավերագրերին։ Ել ո՞վ, բացի արխիվային առնեսներից, չի հասկանում, վոր կուսակցություններին ու լիդերներին հարկավոր ե ստուգել ամենից առաջ իրենց գործերով, և վոչ թե միայն իրենց գեկլարացիաներով։ Պատմությունը քիչ սոցիալիստներ չի ճանաչում, վորոնք պատրաստակամությամբ ստորագրում եյին ուղածդդ հեղափոխական բանաձևերը, վորպեսզի խուսագրվեն (օտպատեք) ձանձրացնող քըննադատներից։ Բայց այդ դեռ չի նշանակում, թե նրանք այդ բանաձևերը կիրառում եյին կյանքում։ Ապա՝ պատմությունը քիչ սոցիալիստներ չի ճանաչում, վորոնք փրփուրը բերաներին պահանջում եյին այլ յերկրների բանվարական կուսակցություններից հեղափոխական ամենաթունդ գործողություններ։ Բայց այդ դեռ չի նշանակում, թե նրանք իրենց սեփական կուսակցության մեջ կամ իրենց սեփական յերկրում անձնատուր չեյին լինում իրենց ոպորտունիստների հանդեպ, իրենց բուրժուազիայի

Հանդես: Արդյոք լենին ա՞յդ պատճառով չեր սովորեցնում մեղ հեղափոխական կուսակցությունները, հոսանքները, լիդերներին ստուգել վո՞չ թէ նրանց դեկլարացիաներով ու բանաձեռով, այլ նրանց գործերով:

Պարզ չե՞ արդյոք, վոր յեթե Սլուցկին խկապես ցանկանում եր ստուգել լենինի ու բոլշևիկների անհաջողությունը դեպի ցենատրիդն ունեցած նրանց վերաբերմունքի մեջ, նա իր հոգվածի հիմք պետք է դարձներ վո՞չ թէ առանձին վավերագրերն ու յերկու-յերեք անձնական նամակներ, այլ բոլշևիկների ստուգումը նրանց գործերով, նրանց պատմությամբ, նրանց գործողություններով: Մի՞թե մեղանում, ուստատանյան սոցիալ-դեմոկրատիայի մեջ, չկային ոպորտունիստներ, ցենարիստներ: Մի՞թե բոլշևիկները վճռական ու անհաջող պայքար չեցին մղում բոլոր այդ հոսանքների դեմ: Մի՞թե այդ հոսանքները թե՛ խղեալիս, թե՞ կազմակերպորեն կապված չեցին Արեմուտքի ոպորտունիստների ու ցենարիստների հետ: Մի՞թե բոլշևիկները ջարդումիշուր չարին ոպորտունիստներին ու ցենարիստներին այնպես, ինչպես նրանց ջարդումիշուր չեր արել աշխարհիս վոչ մի ձախ խումբ: Ի՞նչպես կարելի յե այս ամենից հետո ասել, թե լենին ու բոլշևիկները թերագնահատում եյին ցենարիզմի վտանգը: Ինչո՞ւ Սլուցկին արհամարհեց այս փաստերը, վորոնց վճռողական նշանակություն ունեն բոլշևիկների բնութագրման համար: Ինչո՞ւ նա լենինին ու բոլշևիկներին նրանց գործերով, նրանց գործողություններով ստուգելու ամենից ավելի հուսալի մեթոդը չուտագործեց: Ինչո՞ւ նա դերադասեց պատահաբար հավաքած թղթերը փորիքելու ավելի պակաս հուսալի մեթոդը:

Վորովչետե բոլշևիկներին նրանց գործերով ստուգելու ամելի հուսալի մեթոդին դիմելը մի ակնթարժում դվիսիվայր շուռ կտար Սլուցկու ամբողջ դիրքավորումը:

Վորովչետե բոլշևիկներին իրենց գործերով ստուգելը ցույց կտար, վոր բոլշևիկներն աշխարհումս միակ հեղափոխական կազմակերպությունն են, վորը մինչև վերջը ջարդումիշուր արեց ոպորտունիստներին ու ցենարիստներին և նրանց դուրս վոնդեց կուսակցությունից:

Վորովչետե բոլշևիկների խկական գործերին ու խկական պատճությանը դիմելը ցույց կտար, վոր Սլուցկու ուսուցիչները—տրոցկիստները—այն գլխավոր ու հիմնական խումբն եյին, վորը նորագույն պատճառականությունը ցենարիզմի երես:

մար հանձին Ուլոստույան բլոկի հատուկ կազմակերպություն եր ստեղծել՝ վորպես ցենարիզմի ոչախի:

Վորովչետե բոլշևիկներին նրանց գործերով ստուգելը վերջանականապես կմերկացներ Սլուցկուն վորպես մեր կուսակցության պատճությունը խարդախողի, վորը փորձում է մինչպատերազման ժամանակաշրջանի տրոցկիտմի ցենարիզմը քողարկել լենինի ու բոլշևիկների գեմ ուղղված զրաբարտական մեղադրանքներով թե իրը նրանք թերագնահատել են ցենարիզմի վտանգը:

Ահա թե ինչպես ե, ընկեր խմբագիրներ, Սլուցկու և նրա հոգվածի բանը:

Դուք տեսնում եք, վոր խմբագրությունը սխալ է գործել՝ դիսկուսիա թույլատրելով մեր կուսակցության պատճությունը խարդախողի հետ:

Ի՞նչը կարող եր խմբագրությանդ դեպի այդ սխալ ուղին մղել: Յես կարծում եմ, վոր նրան դեպի այդ ուղին մղել ե ներած լիբերալիզմը, վորն այժմ վորոշ չափով տարածված է բոլշևիկների մի մասի մեջ: Բոլշևիկներից վորմանք կարծում են, թե տրոցկիզմը կոմունիզմի մի ֆրակցիան ե, ճիշտ ե, սխալիող, քիչ հիմարություններ չանող, յերեմն մինչև իսկ հակախորհրդային, բայց և այնպես կոմունիզմի ֆրակցիան: Այսեղից՝ վորոշ լիբերալիզմ տրոցկիստուների ու տրոցկիստորեն մտածող մարդկանց նկատմամբ: Հազիվ թե հարկ կա ապացուցելու, վոր այդպիսի հայացը տրոցկիզմի նկատմամբ՝ խորապես սխալ ու վնասակար ե: Բորք տրոցկիզմն արդեն վաղուց դադարել ե կոմունիզմի ֆրակցիան լինելուց: Իրոք տրոցկիզմն առաջալոր ջոկատնե հակահեղափոխական բուրժուազիայի, վորը պայքար է մղում կոմունիզմի դեմ, ևորհրդային իշխանության դեմ, ԽՍՀՄ-ում սոցիալիզմ կառուցելու դեմ:

Հակահեղափոխական բուրժուազիային ո՞վ տվեց բոլշևիզմի գեմ ուղղված այնպիսի մի հոգեւոր դեմք, ինչպես այն թեղիսը, թե սոցիալիզմի կառուցումը մեր յերկրում անհնարին ե, ինչպես այն թեղիսը, թե բոլշևիկների վերասերումն անխուսափելի յե և այլն: Այդ գենքը նրան տրոցկիզմը տվեց: Զի կարելի պատահականություն համարել այն փասոքը, վոր բոլոր հակախորհրդային խմբագրումները ԽՍՀՄ-ում ևորհրդային իշխանության դեմ պայքարելու անխուսափելիությունը հայտնաբերվելու վերաբերյալ իրենց փորձերում վկայակոչում եյին տրոցկիզմի հայտնի թեղիսը մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու անհնարինության մաս:

սին, Խորհրդային իշխանության վերասերման անխուսափելիության մասին, կազմիտալիզմին վերադառնալու հակակնության մասին:

Հակահեղափոխական բուրժուազիային ԽՍՀՄ-ում՝ ո՞վ տվեց տակտիկական գենք՝ Խորհրդային իշխանության դեմ՝ ուղղված բացահայտ յելութների փորձերի ձևով։ Այդ գենքը նրան տվին տրոցկիստները, վորոնք փորձում եյին հակախորհրդային ցույցեր սարքել Մոսկվայում ու Լենինգրադում 1927 թվի նոյեմբերի 7-ին։ Սա փաստ է, վոր տրոցկիստների հակախորհրդային յելութները բարձրացրին բուրժուազիայի վոդին ու սանձարւութեցին բուրժուական մասնագետների վնասարարական աշխատանքը։

Հակահեղափոխական բուրժուազիային ո՞վ տվեց կազմակերպական գենք՝ ընդհատակյա հակախորհրդային կազմակերպություններ ստեղծելու փորձերի ձևով։ Այդ գենքը նրան տվին տրոցկիստները, վորոնք իրենց սեփական հակարութեկայան անլեռալ խումբն եյին կազմակերպել։ Սա փաստ է, վոր տրոցկիստների ընդհատակյա հակախորհրդային աշխատանքը հեշտացրեց հակախորհրդային խմբավորումների կազմակերպական ձեռագործումը։

Տրոցկիզմը հակահեղափոխական բուրժուազիայի առաջավոր ջոկատն է։

Ահա թե ինչու լիբերալիզմը տրոցկիզմի նկատմամբ, թեկուզ և ջախճախված ու դիմակալորված տրոցկիզմի, քյալլագյողություն է, վորը սահմանակցվում է վոճրագործության հետ, բանվոր դասակարգին գալաճանելու հետ։

Ահա թե ինչու վորոշ «գրականագետների» ու «պատմագետների» փորձերը՝ մաքսանենգորեն մեր գրականության մեջ ներքաշելու գիտակալորված տրոցկիստական հնոտին՝ պետք է բուշեիկների կողմից վճռական հակահարվածի հանդիպեն։

Ահա թե ինչու չի կարելի տրոցկիստական մաքսանենգների հետ գրական դժվարութա թույլարել։

Ինձ թվում է, վոր տրոցկիստական մաքսանենգների կարգին պատկանող «պատմագետներն» ու «գրականագետները» ջանում են իրենց մաքսանենդ աշխատանքն իրականացնել առայժմ յերկու գծով։

Նախ նրանք աշխատում են ապացուցել, թե Լենինը պատերազմին նախորդող ժամանակաշրջանում թերագնահատում երցինորիզմի վտանգները, ընդունին՝ անվտանգությունը։

վում կուահել, վոր, հետեաբար, Լենինն այն ժամանակ դեռևս իսկական հեղափոխական չեր, թե նա այդպիսին դարձավ լոկ պատերազմից հետո, այն բանից հետո, յերբ Տրոցկու ողնությամբ «վերազինվեց»։ Այս տեսակի մաքսանենգների տիպիկ ներկայացուցիչ կարելի յէ համարել Սլուցկուն։ Մենք վերեւում անսանք, վոր Սլուցկին և ընկերությունը չարժեն, վոր նրանցով յերկար զբաղվենք։

Յերկրորդ՝ նրանք աշխատում են ապացուցել, թե պատերազմին նախորդող ժամանակաշրջանում Լենինը չեր հասկանում բուրժուական-դեմոկրատական հեղափոխության սոցիալիստական հեղափոխության վերածելու անհրաժեշտությունը, ընդունին՝ անփորձ ընթերցողին և թողնալում կուահել, վոր, հետեաբար, Լենինն այն ժամանակ դեռևս իսկական բոլշևիկ չեր, վոր այդպիսի վերաճման անհրաժեշտությունը նա հասկացավ միայն պատերազմից հետո, այն բանից հետո, յերբ նա Տրոցկու ողնությամբ «վերազինվեց»։ Այս տեսակի մաքսանենգների տիպիկ ներկայացուցիչ կարելի յէ համարել «Համբկ(ր)կ պատմության դասընթացի» հեղինակ Վոլոսեվիչին։ Ճիշտ է, Լենինը դեռևս 1905 թվին գրում եր, վոր՝ «Ենմոլիրատական հեղափոխությունից մենք իսկուն ի կազմակերպված պրոլետարիատի ուժի համեմատ, զիտակից ու կազմակերպված պրոլետարիատի ուժի համեմատ, կազմակերպ անցնել սոցիալիստական հեղափոխության», վոր՝ «մենք կողմանակից ենք անընդհատ հեղափոխության», վոր՝ «մենք կանգ չենք առնի կիսանամբին»։ Ճիշտ է, կարելի յեր յունան կարգի բազմաբազում փաստեր ու վավերագրեր գտնել Լենինի յերկերում։ Բայց Վոլոսեվիչներն ի՞նչ գործ ունեն Լենինի կյանքից ու գործունեյությունից առնված փաստերի հետ։ Վոլոսեվիչները զրում են նրա համար, վորպեսդի, բոլշևիկյան գործունել ներկայի իրենց հակալենինյան կոնտրաբանդը ներքաշեն, ստեն բոլշևիկների հասցեյին ու խարդախեն բոլշևիկյան կուսակցության պատմությունը։

Դուք տեսնում եք, վոր Վոլոսեվիչներն արժեն Սլուցկիներին։

Սրանք են տրոցկիստական մաքսանենգների «ուղիներն ու ուղերաժեաները»։

Ինքներդ հասկանում եք, վոր խմբագրությանդ գործը չեւշտացնել նման «պատմագետների» մաքսանենգային գործունեյությունը՝ դիտունը՝ դիտունը տրիբունա տրամադրելով նրանց։

Խմբագրությանդ խնդիրն, ըստիս, այն են, վոր բոլշևիզմի պատմության հարցերը հասցնեք պատշտճ բարձրության, մեր կուսակցության պատմությունն ուսումնասիրելու գործը դնեք դիտական, բոլշևիկյան ռելիերի վրա և ուշագրությունը սրեք մեր կուսակցության պատմության տրոցիկոստական ու ամեն տեսակի այլ խարդախիչների դեմ՝ սխատեմատիկաբար պոկելով նրանց դիմակները:

Այս առաջին ևս անհրաժեշտ են, քանի վոր մինչեւ իսկ մեր միքանի պատմագետները, — յես խոսում եմ անշակերտ պատմագետների մասին, մեր կուսակցության բոլշևիկյան պատմագետների մասին, — աղաս չեն այնպիսի սխալներից, վորոնք ջուր են լցնում Սլուցկիների ու Վոլոսեվիչների ջրաղացին: Այսուղ բացառություն չի կազմում, ցավոք սրտի, նաև ընկ: Յարոսլավ-ալեքս, վորի Համբկ(բ)կ պատմության վերաբերյալ գրքույիները, չնայած նրանց արժանիքներին, պարունակում են սկզբունքային ու պատմական բնույթի մի շարք սխալներ:

Կոմ. բարեկով՝ Ի. Ստալին

«Пролетарская Революция» 1931 թ. № 6 (113).

Հայերեն թարգմանությունը խմբագրեցին՝ Ս. Ղևոնյան Տ. Ալեքսանյան,  
Ռ. Հովհաննիսյան  
Տեքն. խմբ. Ս. Խոչարյան  
Սրբագրիչ Հ. Գոլովինյան  
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Արովյան

Հրատ. № 829

Պատկեր № 260, տիրած 3000

Զակազ № 260, տիրած 3000

Հանձնվել և արտադրության 20/VIII 1940 թ.

Ստորագրվել և տպագրելու 9/IX 1940 թ.

Դիմը 20 դ.

Թաղաքական գրականության պետական հրատարակչության  
տպագրան, Յերևան, Ալմահվերդյան № 65

Տպոգрафия Гос. изд. полит. литературы, Ереван,  
Аллавердян № 65,

Վ. 463



ՀՀ Ազգային գրադարան



NL0174834

33267

ԳԻՒԾ 20 Կ.

И. СТАЛИН

О НЕКОТОРЫХ ВОПРОСАХ ИСТОРИИ БОЛЬШЕВИЗМА

Государственное издательство политической литературы

Ереван ● 1940